ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«12» հունիսի 2024թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ,

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) :

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (10.06.2024թ.)՝ ժամը 10:30-ը,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 11.06.2024թ.՝ ժամը 10:30-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ.

ա) գնման ընթացակարգը 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 24-րդ չափաբաժինների մասով՝ կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի

6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և գնման հայտով սահմանված են ապրանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գները՝ վերոնշյալ չափաբաժինների մասով.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
9	Համակարգչի կոշտ սկավառակ	760320
10	Համակարգչի կոշտ սկավառակ	551250
12	Համակարգչի կոշտ սկավառակ	47709
13	Համակարգչի կոշտ սկավառակ	32400
14	Սնուցման բլոկ	88500
15	Համակարգչային ստեղնաշար	473831
16	Ցանցային բաժանարար	706154
17	Ցանցային բաժանարար	531000
18	Ցանցային բաժանարար	756000
19	Մալուխ համակարգչի, UTP cable 6 level	228582
21	Ցանցային միջերեսի քարտեր	30000
22	Ցանցային միջերեսի քարտեր	30000
24	Օպերատիվ հիշողության սարք	226635

բ) գնման ընթացակարգը 1-8-րդ, 11-րդ, 20-րդ, 23-րդ, 25-րդ և 26-րդ չափաբաժինների մասով կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	ՀՀ, 0038, Երևան, Աբելյան փող. , 6/4 շենք
Ալֆա-Էտալոն ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 29ա, բն. 37
ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ	ք. Երևան Դավթաշեն, 4-րդ թաղ.,33/1 շենք, տարածք 67
ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8
ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ	Դավթաշեն 3 թղմ, շ 30, 26
Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ	ք. Երևան, Բաղրամյան 24/2
ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	ք. Աբովյան 3-րդ մ/շ 12/27

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	513600	20%	616320	508464	20%	610156.8	
2	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	1382400	20%	1658880	1368576	20%	1642291.2	
3	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	2568000	20%	3081600	990000	20%	1188000	
3	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	1300000	20%	1560000	1144000	20%	1372800	
3	ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ	5000000	20%	6000000	1157000	20%	1388400	
3	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	1640000	20%	1968000	1640000	20%	1968000	
4	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	3060000	20%	3672000	3029400	20%	3635280	
5	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	493200	20%	591840	488268	20%	585921.6	
8	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	1320000	20%	1584000	890000	20%	1068000	
8	ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ	100000000	20%	120000000	1086800	20%	1304160	
8	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	1480000	20%	1776000	1227600	20%	1473120	
9	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	760320	20%	912384	633600	20%	760320	
9	ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ	946220	20%	1135464	946220	20%	1135464	Մերժված
10	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	551250	20%	661500	459000	20%	550800	
10	Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ	560000	20%	672000	560000	20%	672000	Մերժված
11	Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ	1500000	20%	1800000	780000	20%	936000	
11	ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ	938400	20%	1126080	810000	20%	972000	
11	ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ	5000000	20%	6000000	900540	20%	1080648	
11	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	1420000	20%	1704000	1420000	20%	1704000	
12	ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ	52100	20%	62520	52100	20%	62520	Մերժված
13	ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ	293250	20%	351900	293250	20%	351900	Մերժված
14	ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ	73700	20%	88440	73700	20%	88440	
16	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	700000	20%	840000	582120	20%	698544	
16	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	588000	20%	705600	588000	20%	705600	
18	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	624000	20%	748800	518400	20%	622080	
18	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	750000	20%	900000	580000	20%	696000	
20	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	45000	20%	54000	45000	20%	54000	
21	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	25000	20%	30000	25000	20%	30000	
23	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	100000	20%	120000	100000	20%	120000	
23	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	130000	20%	156000	130000	20%	156000	
23	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	420000	20%	504000	420000	20%	504000	
23	ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ	520000	20%	624000	520000	20%	624000	
24	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	200000	20%	240000	200000	20%	240000	Մերժված
24	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	226635	20%	271962	226635	20%	271962	Մերժված
24	ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ	273700	20%	328440	273700	20%	328440	Մերժված
25	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	145000	20%	174000	143500	20%	172200	

25	ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ	195500	20%	234600	195500	20%	234600	
25	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	280000	20%	336000	280000	20%	336000	
25	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	396000	20%	475200	396000	20%	475200	
25	ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ	1000000	20%	1200000	1000000	20%	1200000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է, աճուրդն ամփոփվել է 11.06.2024թ.՝ ժամը 12:32-ին, և Համակարգի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ են համարվել համապատասխանաբար՝

- 1-5-րդ, 8-10-րդ չափաբաժինների մասով՝ «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ-ն,
- 11-րդ չափաբաժնի մասով՝ «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ն,
- 14-րդ չափաբաժնի մասով՝ «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ-ն,
- 16-րդ չափաբաժնի մասով՝ «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ն,
- 18-րդ, 20-րդ, 21-րդ և 25-րդ չափաբաժինների մասով՝ «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ն,
- 23-րդ չափաբաժնի մասով՝ «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն:

7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. հունիսի 13-ին՝ ժամը 10:30-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

Արթուր Ասատրյան

Անդամներ՝

Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Նորայր Աղամալյան

Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» հունիսի 2024թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ,

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) :

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻմ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

1.1. «Արդմոր Կոնստրակտ» ՍՊ, «Ալֆա-Էտալոն» ՍՊ, «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊ, «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊ, «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊ և «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. **«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ**

2.1.1 Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1՝

ա) կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝ սխալ է լրացված պատվիրատուի անվանումը,

բ) լրացված է 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը, սակայն հաշվի առնելով «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի ե) պարբերությունը, համաձայն որի՝ դիմում- հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում՝ նշված աղյուսակում ընկերության կողմից լրացված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

2.1.2. Ընկերության կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.3, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդ որում, ընկերությունը հայտով ներկայացրել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ինչպես համաձայն Հավելված N 1.2-ի, այնպես էլ՝ համաձայն Հավելված N 1.3-ի:

Հաշվի առնելով ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի ե) պարբերությունը, համաձայն որի՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի, ինչպես նաև այն հանգամանքը, որ ընկերությունը հայտով նաև հայտնել և հավաստել է, որ հանիսանում է ՀՀ ռեզիդենտ՝ «Արդմոր Կոնստրակտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.2–ը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

2.1.3 1-5-րդ, 8-10-րդ չափաբաժինների մասով ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

2.2. «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ

2.2.1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդ որում, վերոնշյալ հավելվածում լրացված է 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը: Հաշվի առնելով ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի ե) պարբերությունը, համաձայն որի՝ դիմում- հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում, նշված աղյուսակում «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊ ընկերության կողմից լրացված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

2.2.2. Ընկերության կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.3, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2.3. 14-րդ չափաբաժնի մասով Ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ հրավերով հիշյալ չափաբաժնի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ «հզորությունը՝ 550W», այնինչ ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «հզորությունը՝ 600W»:

2.3. «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ

2.3.1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝ 1) կետի 3-րդ տողում լրացված չէ մասնակցի անվանումը:

2.3.2. Ընկերության կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.3, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.3.3 16-րդ չափաբաժնի մասով ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.4. «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ

2.4.1 Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերի պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝

ա) մասնակցի՝ ռուսերեն լեզվով անվանման փոխարեն լրացված է մասնակցի՝ հայերեն լեզվով անվանումը:

բ) թերի է լրացված 1) կետը, մասնավորապես՝ բացակայում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստմանը վերաբերող հատվածը, ընթացակարգի ծածկագիրը և մասնակցի անվանումը:

գ) ավելորդ է 3) կետի երկրորդ պարբերությունը:

2.4.2. Ընկերության կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.3, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.4.3. 23-րդ չափաբաժնի մասով ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.5. «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ

2.5.1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդ որում, վերոնշյալ հավելվածում ընկերության կողմից լրացված է 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը, սակայն հաշվի առնելով ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի ե) պարբերությունը, համաձայն որի՝ դիմում- հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում՝ նշված աղյուսակում ընկերության կողմից լրացված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել,

2.5.2. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.3, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

2.5.3. 11-րդ չափաբաժնի մասով ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.6. «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ

2.6.1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

2.6.2. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.3, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

2.6.3. 18-րդ, 20-րդ, 21-րդ և 25-րդ չափաբաժինների մասով ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. հունիսի 17-ին՝ ժամը 10:30-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **«Արդմոր Կոնստրակտ» ՍՊ, «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊ, «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊ և «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊ** ընկերությունների հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով, ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հունիսի 14-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

Արթուր Ասատրյան

Անդամներ՝

Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Նորայր Աղամալյան

Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«17» հունիսի 2024թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ,

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) :

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պայմանների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների մասին.**

1.1. «Արդմոր Կոնստրակտ» ՍՊ, «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊ և «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊ ընկերությունները հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են իրենց կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

1.2. «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության կողմից՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման համար հրավերով նախատեսված կարգով և ժամկետում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) կցվել է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության՝ Հավելված N 1, նոր տարբերակ, որը, սակայն, կազմված է հրավերի պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝ սխալ է լրացված պատվիրատուի անվանումը:

1.3. Հանձնաժողովը որոշեց.

1.3.1.«Արդմոր Կոնստրակտ» ՍՊ, «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊ և «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը, այդ թվում՝ Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

1.3.2. «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի, ինչպես նաև Ընթացկարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

2.1.1. ընտրված մասնակից հայտարարել համապատասխանաբար՝

- 1-5-րդ, 8-10-րդ չափաբաժինների մասով՝ «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ-ին,
- 11-րդ չափաբաժնի մասով՝ «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին,
- 14-րդ չափաբաժնի մասով՝ «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ-ին,
- 16-րդ չափաբաժնի մասով՝ «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ին,
- 18-րդ, 20-րդ, 21-րդ և 25-րդ չափաբաժինների մասով՝ «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին:

2.1.2.

- 3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի, «Քոմփ Պրո» ՍՊԸ-ի և «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 8-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «Քոմփ Պրո» ՍՊԸ-ի և «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 11-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ-ի, «Քոմփ Պրո» ՍՊԸ-ի և «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 16-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի հայտը մերժել,
- 18-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի հայտը մերժել,
- 23-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի, «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ-ի և «Քոմփ Պրո» ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 24-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ-ի և «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 25-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ-ի, «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ-ի և «Քոմփ Պրո» ՍՊԸ հայտերը մերժել:

2.2. 9-րդ չափաբաժնի մասով՝ «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ -ի, 10-րդ չափաբաժնի մասով՝ «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ի, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով՝ «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ-ի, 24-րդ չափաբաժնի մասով՝ «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի, «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ-ի և «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ-ի՝ աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

2.3 6-րդ, 7-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ, 22-րդ և 26-րդ չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 24-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

-գնման ընթացակարգը 6-րդ, 7-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ, 22-րդ և 26-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 23-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

_____ Մարիամ Հայրապետյան